

## ՄԱՏԵՎՈԼ ԽՈՍՈՒԹԻՒՆ

Армянскія древности въ Аккерманѣ (въ Бессарабіи).  
Л. М. Мелитисетъ-Бековъ. 1911. Издание Книжн. Магазина  
«Гуттембергъ» № 65. Тифлесъ. Цѣна 25. коп.

Պ. Լ. Մ. Մելիտիսեթ-Բէկովը այս գրքունիվ դալիս է,  
համապօտագէտ պատմելու Ակքիրմանի հայ գաղթակա-  
նութեան ակցեալն ու ներկան։

Ակքիրմանը յունաց տիրապետութեան ժամանակ  
լուծում էր Թիրտա, Դինուացիների ժամանակ՝ Մանկաս-  
տրո, Սլաւանների ժամանակ Շելդորոդ, Թուրքիայի տի-  
րապետութեան ժամանակ՝ Ակքիրման, այժմ՝ Ակքիրման,  
որ Բելգորոդի թուրքանութիւնն է, Ազիտակ քաղաք նշա-  
նակութեամբ։

Պ. Մելիտիսեթ-Բէկովը դատելով նորագօյն ազրիւրնե-  
րից՝ կարծում է, որ հայերը գաղթեցին Ակքիրման Փարո  
Աստույից և Կ. Պոլսի հարևան տեղերից Փ. դարում։

Հայ սրբութիշների ասելով հայերի գաղթականութիւնը  
դէռ ի Խոբից Մոլտավիո և Աեհաստան տեղի է անեցել  
ԺԷ., դարում, երբ որ սելջուկեան թուրքերը նուաճեցին  
Անին, և տեղի ստուկացաւ ԺԷ. դարում։ Այս գաղթա-  
կանութեան կենդրուներն են Ակքիրմանը, Թէոգուիան  
Սուդակը և լն։

Հայերը շատ վաղոց վաճառականուկան յարաքերու-  
թեան մէջ էին Ռուսաստանի, Բիւզանդիայի, Պարսկա-  
ստանի, Թուրքիայի և շատ հեռաւոր ազգերի հետ։ Իրանց  
յատուկ եւսնդի և աշալլիջութեան շնորհիւ նրանք ամեն  
տեղ լաւ ընդունելութիւն էին գտնում, և Աղէքսանդր Լ.  
կոյորը թոյլ սուեց հայերին պարագել վաճառականու-  
թեամբ ու արհեստներով Քիշնեւ, Օրէէյ և Խօթին քա-  
ղաքներում։

Հայք Խորիւմ այնքան շտացել էին ԺԷ. դարում, որ

1455 թ. սեպտեմբերի 6-ին զինուական մի վճռի մէջ առաւած է ռԱյս Երկիրը մեծ մասամբ ըռնուած է հայերով, ուսնք մեր հաւատարիմ և աղնիւ վաճառականներն են։ այս գովելի յատկութիւնը մասամբ վերաբերում է Ակրիրմանի հայերին էլ Գիլբեր դը Լաննուա (1399—1450 թ.) ցոյց է աալիս իւր ուղեգութեան մէջ, որ ՇՄոնկաստրում կամ Բելգորոդում (Ակրիրմանում) ապրում էին գինուացիք, վալախներ և հայեր։ Բացի ուրիշ ապացոյցներից, հայ եկեղեցու հարաւային որմի վերայ կայ մի արձանագրութիւն 1446 թ. Ք. Բազմաթիւ տապահաքարերը ժե. գալից ցոյց են տալիս որ Ակրիրմանում ըաղմաթիւ հայ վաճառականներ կային։

Հայք քաղաքի հետ միասին անցել են զանազան պետութիւնների ձեռքը։ Վերջապէս Ալէքսանդր 1-ի կայսերութեան ժամանակ ընդունեցին Ռուսաց հպատակութիւններնի է, որ թուրքաց տիրապետութեան ժամանակ Եկատերինէ կայսրուհու հրամանով հայերը Պօտեմկինից հրաւէր ստացան գաղթել Ռուսաց սահմանը և ընտակուել Գրիգորիովում։

Եկատերինոսկալաւի նահանգապետի մի գրութիւնից, որ 1792 թուին ուղղուած է իշխ. Պ. Ա. Զուբովին, իմանում ենք թէ Կրիգորիովով գաղթող հայ ակրիրմանցիները ինչով էին պարապում և ինչ ստացուածներ ունեին։ Նրանք թողել էին իրանց տներն ու խաղողի 316 այգիները որոնք կիսադնի՝ 37550 ռուբլի արժեին, չմիշելով իրանց տները։ և յանձն էին առնում բաւականանալ, եթէ ստանային միայն իրանց այգիների կէս դինը։ Նոյն նահանգապետը մի այլ տեղում յիշում է, որ հայերի բաւական մասն էլ պարապում է անասնապահութեամբ ու երկրագործութեամբ, ըայց բոլորն էլ, առանց ըացառութեան, հակամէտ են այգեգործութեան և պարտիզականութեան։

Ուրեմն Ակրիրմանի հայերը պարապում էին վաճառականութեամբ, արհեստներով, այգեգործութեամբ, պարտիզականութեամբ և անասնապահութեամբ։

Բժշկեան Մինաս վարդապետը իւր ճանապարհորդու-

թեան մէջ, որ տպուած է Վենետիկում 1830 թ. ել. 317։ յայտնում է, որ Ակրիբմանում 150 տուն կար, և ունէին մի հին եկեղեցի կիսով չափ գետնի մէջ, երեք եկեղեցի է եղել Ակրիբմանում, մէկը Ս. Առտուածածնի Վերափոխան, մէկը Ս. Օգուստիոսի և մէկը Ս. Յովհան առտուածարանի։ Վերջին երկուքը այժմ դոյտիւն չունեն, կայ և մի մատուռ Ս. Գէորգի անուանքը Շարօ դիոցում։ Չորս եկեղեցիների գոյութիւնը արդեն ապացուցանում է, որ հայք Ակրիբմանում բազմաթիւ էին և բարեկեաց։ Երբեմն չորս ծիսական համայնք կազմող Ակրիբմանը 1792—1830 թիւը նուաղելով՝ հասաւ 150 տան, և երեք եկեղեցու տեղ մնաց մէկը—Ս. Առտուածածնի Վերափոխան։ իսկ այժմ Ակրիբմանում կան միայն 100 տուն, և պատկանում են Նախիջևան—Բևսարաբիայի հայ թէմին։

Հայերը Ակրիբմանում Գինուացոց օրից կոչում են «Հերմէն» (hermins) կամ «Ժերմէն» (germins)։ Այդ կոչումն այս ոնական ծագումն ունի, Մոլդավացոց Դրբերում հայք կոչում են սերմենէն։ Բաց ի այս, ոլ, Մելքիոէդ-բէկովը Ակրիբմանում շատ անգամ լսել է, հայերի վերաբերութեամբ մի մականուն «Զալդոս», թէ որ տեղից և ինչպէս կարող էր սարքուել այդպիսի կոչումն, չդիտէ։ Ակրիբմանի հայերի մասին այս համառօտ տեղեկութիւնները տալուց յետոյ ոլ, Մելքիոէթ-բէկովը անցնում է արձանագրութիւններին, որոնք մեծ մասամբ ժէ և ժլ։ գարերին են պատկանում՝ ու թօւով 38 հատ են։ Արձանագրութիւնները փորուած են քարերի վերայ երկաթագրով, յաճախ պատահում են փակագրեր և պատուով գրուած քառեր ինչպէս Ա. Ճ. Յ. և ևն։ Արձանագրութիւնների լեզուն աղջատ գրաբար է, Տարեթուերը հայկական են։

Ակրիբմանը ուակէս հայաբնակ վայր հրտարել է հեռաւոր հայերին և գաղթականների մէջ ոչքի են ընկնում այդպիսի պահովութառ հայերի տապահագրեր։

Յաւսիկ Արքեպօս.

